

Լոռու մարզում իրականացվող արշավի պայմաններ

1. Ներածություն

1.1 «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի կողմից Լոռու մարզում վճարային գործարքները խթանող արշավ /այսուհետ՝ Արշավ/:

1.2 Արշավի կազմակերպիչ է հանդիսանում «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ն /այսուհետ՝ Կազմակերպիչ/:

1.3 Լոռու մարզում գործող Կազմակերպչի մասնաճյուղերի կողմից տրամադրված հիմնական քարտերի քարտապաններ /այսուհետ՝ Քարտապան/:

1.4 Լոռու մարզում միայն Կազմակերպչի հետ համագործակցող առևտրի և սպասարկման կետեր, բացառությամբ այն առևտրի և սպասարկման կետերի, որտեղ Կազմակերպչի հետ համագործակցությունն իրականացվում է համատեղության սկզբունքով՝ համատեղ POS/ՀԴՄ տերմինալիների միջոցով /այսուհետ՝ ԱՄԿ/:

1.5 Արշավի շրջանակներում ԱՄԿ-ներում առավելագույն քանակի վճարային գործարքներ իրականացրած երեք Քարտապաններին Կազմակերպչի կողմից սահմանված պարգևատրում /այսուհետ՝ Պարգևատրում/:

1.6 Մասնակցելով Արշավին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.7 Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է www.acba.am կայքում:

2.2 Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն կտեղադրվի Արշավի 2.1 կետում նշված հարթակում:

2.3 Արշավի շրջանակներում Պարգևատրումները սահմանվում են հարկումից հետո: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Կազմակերպիչը:

3. Մասնակցության պայմաններ

3.1 Արշավի շրջանակներում վճարային գործարք է համարվում Լոռու մարզի ԱՄԿ-ներում իրականացրած **2,000 (երկու հազար) ՀՀ դրամ** և ավելի վճարումները / այսուհետ՝ Վճարային գործարք/, բացառությամբ **էլեկտրոնային դրամապանակների միջոցով, ինչպես նաև վերջիններիս գրասենյակներում և բջջային օպերատորների գրասենյակներում կատարվող վճարումների:**

3.2 Ս.թ. սեպտեմբերի 15-ից հոկտեմբերի 31-ը (ներառյալ) Լոռու մարզի ԱՍԿ-ներում առավելագույն քանակի Վճարային գործարքներ իրականացրած առաջին երեք Քարտապանները կստանան Պարգևատրում ստորև նշված կարգով.

- 1-ին տեղը զբաղեցրած Քարտապան – 300,000 ՀՀ դրամ
- 2-րդ տեղը զբաղեցրած Քարտապան – 200,000 ՀՀ դրամ
- 3-րդ տեղը զբաղեցրած Քարտապան – 100,000 ՀՀ դրամ

Այն դեպքում, երբ պարգևատրման ենթակա Քարտապանների կողմից կկատարվեն միննույն քանակի Վճարային գործարքներ, Քարտապանի զբաղեցրած տեղը որոշելիս հաշվի կառնվի հաշվարկման ենթակա գործարքների գումարային մեծությունը:

3.3 Արշավին կարող են մասնակցել կից և լրացուցիչ քարտերի Քարտապանները, սակայն կից և լրացուցիչ քարտերով կատարված Վճարային գործարքները գումարվելու են հիմնական քարտով կատարված Վճարային գործարքներին: Քարտապանի տարբեր քարտերով կատարված Վճարային գործարքները հաշվարկվելու են միասին:

3.4 Արշավին կարող են մասնակցել Լոռու մարզի բոլոր ԱՍԿ-ները, որտեղ փակցված են և որոնց POS/ՀԴՄ տերմինալների վրա փակցված են Արշավի մասնակցության վերաբերյալ տարբերակիչ նշանները:

3.5 Յուրաքանչյուր Քարտապանին կարող է տրամադրվել 3.2 կետով սահմանված առավելագույնը մեկ Պարգևատրում:

3.6 Կազմակերպիչն իրավունք ունի Արշավի ընթացքում և Արշավի ամփոփման արդյունքում չպարգևատրել զեղծարարություն (կեղծ վճարումների սխեմա, այլ խարդախություն) իրականացրած Քարտապանին և ԱՍԿ-ին:

3.7 Կազմակերպչի կողմից արշավը կամփոփվի մինչև 20/11/2019թ-ը (ներառյալ): Ընդ որում, 3.2 կետով սահմանված պարգևատրումները կտրամադրվեն Արշավի ամփոփումից հետո մինչև 10/12/2019թ.-ը (ներառյալ):